ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ 1700-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴԱՐՁԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վ.Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանը քրիստոնեությունը հռչակելով պետական կրոն, բնականաբար, պետք է ստեղծեր եկեղեցական ամբակուռ կազմակերպություն: Պաշտոնապես նոր կրոնի արմատավորումը պետական հիմքերի վրա դրեց նաև եկեղեցական համակարգի ստեղծումը, որին, անշուշտ, նպաստեց հայոց ամբողջական դարձից առաջ Հայաստանում կազմակերպված քրիստոնեական համայնքի և նրա գլուխ կանգնած եպիսկոպոսի գործունեությունը: Այս հանգամանքը որոշակի հող ստեղծեց նաև Հայաստանում քրիստոնեության պետականացումից անմիջապես հետո հայոց հայրապետի կաթողիկոսական իշխանության ձևավորման համար: Ավելի ընդլայնվեց առաքյալների հիմնադրած հայոց եկեղեցու գործառնությունը, ընդգրկելով երկրի գրեթե բոլոր հորիզոնները: Գրիգոր Լուսավորչի հովվապետական իրավազորությունը, Ագաթանգեղոսի հավաստմամբ, ուներ աստվածային ծագում: Պատմագիրը համոզված է, որ անձամբ Քրիստոսն էր Տրդատ արքային հրամայել (հրեշտակի միջոցով), որպեսզի Գրիգորին կարգի հայոց աշխարհի քահանայապետ: Պատմիչն այդպիսով Գրիգորի հայրապետական իշխանությունը յուրովի աղերսակցում է Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների գործունեության հետ, որոնց, ինչպես հայտնի է, Քրիստոսն էր հրահանգել քարոզչություն կատարել արևելյան երկրներում: Անշուշտ, նկատելի է նաև Գրիգորին հայոց առաքյալ ներկայացնելու պատմագրի միտումը:

Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության («Վարք»-ի) հեղինակը Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական իշխանությունը նվիրապետորեն լծորդում է Կեսարիայի հայրապետական աթոռին: Նա համոզված է, թե Քրիստոսը Տրդատ Մեծին ասել էր, որ Գրիգորը ձեռնադրվելու համար պետք է գնա այնտեղ, որտեղ նա սովորել է Սուրբ գիրքը: Այս վկայությամբ պարզ է դառնում ձեռնադրվելու համար Գրիգորի Կեսարիա մեկնելու բուն դրդապատճառը այդ քաղաքում նրա ուսումնառության և այնտեղի հոգևորակա-

---

[1] *Եվսեբիոս Կեսարացին IIIդ. կեսերին Հայաստանում գիտե Մերուժան եպիսկոպոսին (տե՛ս Եվսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 517): Փավստոս Բուզանդը Գրիգոր Լուսավորչից առաջ հիշում է Թադեոսի աթոռը, նրա հիմնած եկեղեցական վիճակը (Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս.Պետերբուրգ, 1883, էջ 60, 62):*

[2] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տէր-Մկրտչեանի և Ստ.Կանայեանցի, Տփղիս, 1909, էջ 413:*

[3] *G.Garitte, Documents pour l' etude du livre d' Agathange, Vaticano, 1946, p. 89. Ագաթանգեղոսի հունարեն թարգմանությունը կատարվել է հայկական բնագրից, որը ցարդ կորած է համարվում. տես Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը, թարգմ., ծան. Հր.Բարթիկյանի (Էջմիածին, 1966, է, էջ 30 - 31), G.Vinkler, Our present knowledge on the history of Agat'angelos and its oriental versions (Revue des Etudes Arméniennes, t. XIV, 1980, p. 130 – 131), M.Chaumont, Sur l' origine de Saint Gregoire d' Armenie, le Museon (Revue d'Etudes orientales, t. 102, fasc. 1 – 2, Louvain, 1989, p. 123).*

նությանը վաղածանոթ լինելու հանգամանքը: Անշուշտ, ձեռնադրվելու համար Գրիգորը կարող էր մեկնել այլ վայրեր, բայց նախընտրեց Կեսարիան, որը հելլենականացված Կապադովկիայի հոգևոր կենտրոնն էր և մշակութային առնչություններ ուներ հելլենիստական քաղաքակրթության ոլորտի մյուս երկրների, այդ թվում նաև Հայաստանի հետ:

Կեսարիայում Գրիգորի ձեռնադրվելը, անշուշտ, ուներ նաև ուրիշ և ավելի զորեղ շարժառիթներ: Ըստ էության, Գրիգորի ձեռնադրության փաստը զուտ ձևական, ծիսական արարողություն էր և նպատակ ուներ պահպանել Հայոց եկեղեցու հոգևոր, ծիսական միությունը քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Ընդսմին դրան էր մղում նաև Հայոց եկեղեցու ներքին կազմակերպությունը: Որպեսզի Գրիգորը Հայաստանում կաթողիկոս ձեռնադրվեր, անհրաժեշտ էր առնվազն երեք եպիսկոպոսների առկայություն, որպիսին Հայոց եկեղեցին դեռևս չուներ: Ինքը՝ Գրիգորը, իբրև Հայոց հայրապետ, պետք է ձեռնադրեր եպիսկոպոսների, սակայն առանց կաթողիկոս ձեռնադրվելու նա զուրկ էր նման իրավազորությունից: Ուստի անհրաժեշտ էր դառնում նրա ձեռնադրվելը քրիստոնեական եկեղեցական կենտրոններից մեկում:

Այն փաստը, որ Տրդատ III-ը Գրիգորին նախքան Կեսարիայում ձեռնադրվելը, կարգել է եկեղեցու գլուխ[4], վկայում է Հայոց եկեղեցու ձևավորված լինելու, անկախ դառնալու միտումի մասին: Փաստորեն Հայրապետական իշխանությունը Գրիգորը ստանում է ոչ թե Կեսարիայի մետրապոլիտից, այլ Հայոց թագավորից: Ագաթանգեղոսը ոչ մի հոգևորականի չի հիշում այն ժողովում, որը հրավիրվեց Տրդատ Մեծի հրամանով և նպատակ ուներ Գրիգորին ընտրել Մեծ Հայքի քահանայապետ: Ժողովում հիշվում են լոկ թագավորը և ավագ նախարարները, կուսակալները, բդեշխները[5]: Իհարկե, դա չի նշանակում, թե Հայաստանում ընդհանրապես հոգևորականներ չկային: Պատմիչը նկատի է առել այն իրողությունը, որ այդ պահին Հայաստանում չկար հոգևոր գերագույն իշխանություն: Ընդ որում, հունարեն Վարքը հավաստում է, որ Գրիգորի Կեսարիա մեկնելու պահին արդեն իսկ Հայաստանի շատ բնակավայրերում կային քահանաներ, որոնք Գրիգորին Կեսարիա ճանապարհեցին օրհնանքով[6]: Այդ քահանաների մի մասը, անշուշտ, ձեռնադրված է եղել մինչև Գրիգորի քարոզչությունը:

Ինչպես վկայված է Ագաթանգեղոսի մոտ, Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի բոլոր բնակավայրերում ցույց էր տալիս եկեղեցիների տեղերը, բայց դրանց հիմքերը չէր դնում. «զի չունէր զպատիւ քահանայութեան»[7]: Պատմագրի հաղորդմամբ, Հայաստանի բոլոր կողմերից Վաղարշապատ էին գալիս կարողունակ աշակերտներ՝ քրիստոնեական վարդապետությունը Գրիգորի մոտ սովորելու և նոր կրոնի քարոզիչներ դառնալու համար[8]: Ուրեմն Գրիգոր Լուսավորիչը պատրաստել է քարոզիչներ, առանց նրանց ձեռնադրելու՝

Հայաստանն իբրև Հռոմի «դաշնակից և բարեկամ», առանց հաշվի առնելու նրա տիրակալի կամքը, նույնիսկ ի հեճուկս նրա, պետականորեն ընդունեց քրիստոնեական կրոնը, դրանով իսկ ցուցահանելով իր հոգևոր և

---

[4] Ագաթանգեղոս, էջ 412:
[5] Նույն տեղում, էջ 414:
[6] G.Garitte, նշվ. աշխ., էջ 84:
[7] Ագաթանգեղոս, էջ 406 - 407:
[8] Նույն տեղում, ՃԷ, էջ 402 - 403:

քաղաքական ինքնուրույնությունը: Քանի որ Գրիգորը Կեսարիայից էր եկել Հայաստան՝ քրիստոնեությունն տարածելու, ուստի նրա հաջողությունները կարող էին թևավորել նաև այդ քաղաքի հոգևորականությանը: Ինչպես վկայված է Հունարեն Վարքում, Գրիգորը Կեսարիայում դիմավորվեց անթաքույց հաղթացնծանքով: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու փաստն ինքնին պետք է համարվեր այն ժամանակ տակավին միասնական քրիստոնեական աշխարհի խոշոր հաղթանակներից մեկը: Միաժամանակ, հարկ է նշել, որ ավագ նախարարների ու զորքի ուղեկցությամբ Գրիգորի առաքելությունը Կեսարիա, դրսևորում էր պետականորեն քրիստոնեությունն ընդունած Հայոց թագավորության զորակցությունն արևմտյան քրիստոնեությանը: Դա հույժ կարևոր ձեռնարկում էր քրիստոնեական կրոնի արմատավորման տեսակետից, հատկապես տվյալ պահին, երբ Հռոմեական կայսրությունում հալածվում էր այդ հավատքը: Ինչպես հավաստում է պատմագիրը, Գրիգոր Լուսավորչին Կեսարիա մեկնելիս ուղեկցում էր հայ ազատանու ընտրանին՝ «զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն», այդ թվում՝ մարդպետը, թագադիր ասպետը, սպարապետը, բդեշխները, Սյունյաց և Արծրունյաց գահերեց իշխանները[9]: Հունարեն Վարքում ասվում է, որ Գրիգորին, բացի նախարարներից, ուղեկցում էին 30 հազարանոց այրուձին և «բազմաթիվ հետևազորայիններ»[10]: Նմանօրինակ ցույցը Տրդատ թագավորի կողմից, անշուշտ, նաև Հայաստանի հզորության, անկախության դրսևորումն էր հատկապես այնպիսի մի ժամանակ, երբ Հռոմեական կայսրությունը տակավին պաշտոնապես չէր ընդունել քրիստոնեությունը: Թեև կայսրության արևելյան կողմերում իշխող Վալերիոս Լիկինիոսը 313թ. Բյութանիայի Նիկոմեդիա քաղաքում հրապարակեց այսպես կոչված Միլանի հրովարտակը («Էդիկտը»), որով պրովինցիաների որոշ կառավարիչների հրահանգվում էր հանդուրժող վերաբերմունք ցուցաբերել քրիստոնյաների նկատմամբ և նրանց թույլ տալ ազատորեն դավանելու իրենց հավատքը, սակայն այդ քայլը բխում էր տվյալ պահի քաղաքական իրավիճակից և շուտով (320թ.) նույն Լիկինիոսը սահմանափակեց քրիստոնյաներին ընձեռված իրավունքները: Հռոմեական կայսրությունը պետականորեն շարունակում էր մնալ դիցապաշտ: Անգամ Կոստանդին Մեծը մահվանից քիչ առաջ՝ 337թ. ընդունեց քրիստոնեությունն, որը սակայն կայսրությունում պետական կրոն հռչակվեց միայն Թեոդոս Մեծի (379 – 395) օրոք[11]:

Պետականորեն Հայաստանում քրիստոնեության ընդունումը Գրիգոր Լուսավորիչին օժտում էր նաև պետական-քաղաքական գործառնությամբ: Անշուշտ, նաև դրանով պետք է բացատրել Տրդատ Մեծի կողմից Գրիգորին նման պատկառազդու ուղեկիցներով Կեսարիա առաքելը;

Պետք է կարծել, որ Գրիգորը Կեսարիա ուղևորվելիս ուներ նաև ուրիշ ծրագրեր: Որպես դրացի երկրի հոգևոր առաջնորդ և պետական բարձրագդեցիկ այր, նա ըստ երևույթին նպատակադրվել էր նաև սատար կանգնել Փոքր Հայքի և Կապադովկիայի հայազգի քրիստոնյաներին՝ Հայոց եկեղեցու հետ նրանց կապերու ակնկալիքով: Դրանում նա առանձնահատուկ շահագրգռվածություն պետք է ցուցաբերեր նաև այն պատճառով, որ քաջածանոթ

[9] Նույն տեղում, ՃԺԲ, էջ 414:
[10] G. Garitte, նշվ. աշխ., էջ 83:
[11] История Византии, т. I, М., 1967, с. 179 – 180.

լինելով այդ երկրամասերի հայ ազգաբնակչության կացությանը, վարքուբարքին, ակնկալիքներին, լավատեղյակ էր նրա տրամադրություններին, ձգտումներին և գիտեր, թե քրիստոնեությունն ինչպիսի խորն արմատներ է գցել նրանց մեջ: Այս միտումը նույնպես նպաստեց Կեսարիա նրա առաքելությանը: Հարկ է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ Հռոմեական կայսրության քրիստոնյաները (հատկապես Միլանի հրովարտակից հետո) ակնկալում էին, որ քրիստոնեությունն իրենց երկրում նույնպես կարող է պետական կրոն հռչակվել և ամեն կերպ հետամուտ էին դրան: Հայոց թագավորության կողմից Հայաստանին մերձակա հռոմեական երկրամասերի քրիստոնյաներին նեցուկ կանգնելը պետք է ստարեր նաև կայսրությունում քրիստոնյաներին պետական հովանավորության տակ առնելու, քրիստոնեությունը պետականորեն գերիշխող կրոն հռչակելու գործին: Հուսագրող էր, անշուշտ, Տրդատ Մեծի նամակը Կեսարիայի արքեպիսկոպոս Ղևոնդիոսին, որն իր պատասխան թղթում մեծ նշանակություն էր տալիս երկու եկեղեցիների միջև դաշնությունը անխախտ պահելու անհրաժեշտությանը[12]: Թեև նշված ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցիները դավանապես ներդաշնակ մի միություն էին կազմում, բայց այն մեծ կարևորություն էր ստանում հատկապես այդ պահին, երբ կայսրությունում դեռևս պետականորեն չէին ամրապնդվել քրիստոնեության դիրքերը: Ստեղծված պայմաններում տարբեր եկեղեցիների առնչություններն ունեին փոխադարձության և հավասար հիմունքներով համագործակցելու միտում, որն անխախտ էր մնում ձեռնադրություններով, միմյանց հղված թղթերով, հանդիպումներով: Բայց Կեսարիայում Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը հետևանք էր ոչ միայն միջեկեղեցական միությունը անխախտ պահպանելու կանխահոգության, այլև Հայոց թագավորության կողմից Կեսարիայի աթոռին զորակցելու նպատակադրման: Հայ նախարարների և զորքի ուղեկցությամբ Գրիգորի Կեսարիա մեկնելը նպատակաուղղված էր դրան և ցուցադրում էր քրիստոնեական եկեղեցիների թե՛ դավանական և թե քաղաքական համադաշնությունը, շահերի ընդհանրությունը: Անշուշտ, Կեսարիայում և Փոքր Հայքում (Սեբաստիայում) Գրիգոր Լուսավորչի ժամանման առթիվ կայացած շքեղահանդեսները դրա վառ դրսևորումներն էին: Գրիգորի ձեռնադրության առթիվ կայացած շնորհանդեսին մասնակցում էին տեղացի հոգևորականները՝ Ղևոնդիոս պատրիարքի գլխավորությամբ, նաև Կեսարիայի իշխանը, որոնք առանձնահատուկ հոգատարությամբ ընդունեցին և մեծարեցին Հայաստանից ժամանածներին[13]: Եվ դա այն ժամանակ, երբ հայերը նոր էին հաղթանակ տարել քրիստոնեության անհաշտ թշնամի Մաքսիմիանոս Դայա կայսրի (305 - 313) դեմ[14]: Անշուշտ, այդ պատերազմի ավարտից (312թ.) և կողմերի միջև հաշտության կնքումից հետո է հնարավոր դարձել Գրիգորի մեկնելը Կեսարիա: Այդ առաքելությունը տվյալ պահին խորհրդանշում էր նաև քրիստոնեության թշնամիների դեմ մղված պայքարում անկախ Հայաստանի պետության զորությունը, քրիստոնյաներին սատար կանգնելու նրա վճռականությունը:

Հայերի ու հռոմայեցիների միջև վերոնշյալ պատերազմից հետո հաշտություն է կնքվել 312թ. սկզբին: Ղևոնդիոսի պատրիարքության առա-

---

[12] Ագաթանգեղոս, էջ 416 - 418, էջ 431:

[13] Նույն տեղում, ՃԺԳ, էջ 419, G. Garitte, նշվ. աշխ., էջ 85:

[14] Եվսեբիոս Կեսարացի, նշվ. աշխ., էջ 688:

ջին տարին հայտնի չէ: Նա պատրիարք է հիշվում 314 և 325թթ.: Ամենայն հավանականությամբ, Գրիգորի ձեռնադրվելը կատարվել է 312 - 314 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում: Այն կարող էր տեղի ունենալ վերը նշված պատերազմի ավարտից հետո: Այդ ձեռնադրության ժամանակը չպետք է որոշել Միլանի հրովարտակի տարեթվով[15]:

Կեսարիայում ձեռնադրվելուց հետո Գրիգոր Լուսավորիչը եռանդուն զբաղվեց հեթանոսական պաշտամունքը Հայաստանում արմատախիլ անելու գործով, որի համար անհրաժեշտ էր ունենալ կազմակերպված եկեղեցի և հոգևորականություն: Ագաթանգեղոսի վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը սեբաստացի շատ հոգևորականների համոզեց և հետո բերեց Հայաստան, որպեսզի նրանց դարձնի Հայոց աշխարհի քահանաներ[16]: Անշուշտ, Գրիգորի այդ քայլը կատարվեց Կեսարիայի աթոռի հետ կանխավ արված համաձայնությամբ: Հեթանոսության դեմ մղվող պայքարում Կեսարիայի հայրապետը և Հայոց նորընծա կաթողիկոսը գործում էին երկուստեք հաճությամբ:

Կեսարիայից վերադառնալով Հայաստան, Գրիգոր Լուսավորիչը Տրդատ III-ի լայն աջակցությամբ եռանդուն ու անդուլ ջանքեր ներդրեց երկրի քրիստոնեական դարձը կարելույն չափ ավարտուն ու լիակատար դարձնելու համար: Հայաստանի սրտում՝ Այրարատում, շնորհիվ պետական հարաժամյա և անմիջական միջամտության, քրիստոնեական կրոնը համեմատաբար արագ արմատավորվեց, սակայն պատկերն այլ էր Հայաստանի հարավային գավառներում, ուր այն տակավին մնում էր մակերեսային, տեղի հեթանոսության դիմադրության պատճառով: Ընդդիմության կենտրոններ էին հեթանոսության հինավուրց օրրանները՝ Տարոն և Բագրևանդ գավառները, որտեղից դժգոհության ալիքները կարող էին տարածվել Հայաստանի բոլոր հորիզոններում: Այդ խմորումները հույժ վտանգավոր էին նաև քաղաքական տեսակետից, քանի որ աջակցություն էին գտնում հեթանոսամետ Հայ նախարարների և Սասանյանների ու զրադաշտական հոգևորականության կողմից: Այդ էր պատճառը, որ Գրիգորը Կեսարիայից վերադառնալով՝ առաջին հերթին մեկնեց Տարոն:

Հայաստանի հարավում՝ հեթանոսության դեմ մղած պայքարի ընթացքում Գրիգոր Լուսավորիչը, համաձայն մի վկայության, հենվում էր նաև ասորի հոգևորականների վրա, որոնց մի մասն ինքն էր բերել Կեսարիայից (Նրանցից մեկն էր Զենոբ Գլակը, որին Գրիգորը կարգեց Ս.Կարապետ վանքի առաջնորդ և Տարոնի եպիսկոպոս)[18]: Սակայն տեղացի քրմությունը,

---

[15] Տե՛ս Ա.Մարտիրոսյան, Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը 3-րդ դարում (Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 1, էջ 54 - 55):

[16] Ագաթանգեղոս, էջ 420 - 421: Ըստ Ագաթանգեղոսի արաբերեն խմբագրության, Գրիգորը և իր ուղեկիցները Սեբաստիայում «Հավատացյալ ու բարեպաշտ եղբայրների մի խմբի համոզեցին գնալ իրենց հետ, որպեսզի Սուրբ Գրիգորիոսը նրանց ձեռնադրի (և դարձնի) իր երկրի կղերը» (Ա.Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Ե., 1968, էջ 90): Նույնն է հավաստված նաև Հունարեն «Վարք»-ում:

[17] Այս մասին ուշագրավ տվյալներ է պարունակում Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկը, որի առաջին մասը (Զենոբ Գլակին վերագրված) կազմված է ազգային-եկեղեցական և ժողովրդական ավանդությունների հիման վրա, ուստի ունի անառարկելի պատմական հենք:

[18] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա.Աբրահամյան, Ե., 1941, էջ 38, 78:

հենվելով մոլեկրոն, հեթանոսաբարո ամբոխի վրա, կատաղի դիմադրություն ցույց տվեց քրիստոնեությանը:

Ստեղծված պայմաններում առանց պետական զորեղ միջամտության հնարավոր չէր մարել Տարոնում և հարակից շրջաններում բռնկված հրդեհը: Ուստի Տրդատ III-ն անձամբ ժամանեց Տարոն, որից հետո Արծրունյաց, Անգեղ տան, Անձևացյաց ու Սյունյաց նախարարների ուժերով հեթանոսները պարտության մատնվեցին, վերացվեցին Աշտիշատի և Տարոնի մյուս հեթանոսական տաճարները, ոչնչացվեց տեղացի քրմության մեծ մասը: Այդ պայքարում, անշուշտ, Գրիգորին աջակցեցին նաև քրիստոնյա այն հոգևորականները, որոնք նախկինում պատկանել էին քրմական դասին: Թերևս նաև նրանց խորհրդով էր, որ Գրիգորը պահպանեց հեթանոսական տաճարների շենքերը: Թեև Ագաթանգեղոսը գրում է, որ եկեղեցիների հիմքերը դրվեցին «ի տեղիս մեհենացն», սակայն չպետք է կարծել, թե մեհենական շենքերը հիմնիվեր ավերվել, և նրանց տեղում եկեղեցիներ են կառուցվել: Կարճատև ժամանակամիջոցում դա անհնարին էր իրականացնել: Հեթանոսության հետքերը լիովին ջնջելու համար նախկին կռատների շենքերը վերածվեցին քրիստոնեական եկեղեցիների: Աշտիշատ ավանը, որ ըստ Մովսես Խորենացու, Հայաստանի քրմապետների՝ Վահունի տոհմի «սեպհական գիւղն» էր[19], դարձվեց քրիստոնեական ազդեցիկ կենտրոն: Այնտեղ էր, որ Գրիգորն առաջին հերթին (հավանաբար 314թ.) հիմնեց վանք, ապա, դարձյալ Տարոնում Քարքե լեռան ստորոտում հիմնարկեց Մուշի Ս.Կարապետ վանքը, որը դառնալու էր համերկրային հռչակավոր ուխտատեղի: Հեթանոսությանը ծանր հարված հասցվեց նաև Բագրևանդում, որտեղ էր գտնվում հին կրոնի մյուս գլխավոր կենտրոնը՝ Բագավանը: Այն նաև հին Հայաստանի քաղաքական նշանավոր կենտրոնն էր, որտեղ Նավասարդյան տոներին գումարվում էին պետական հույժ կարևոր հնչեղություն ունեցող աշխարհաժողովները (հետագայում դրանք փոխարինվեցին եկեղեցաժողովներով, որոնց հին ավանդույթի համաձայն, մասնակցում էին նաև նախարարները)[20]:

Պետականորեն քրիստոնեության ընդունումն ապահովեց Հայոց դարձի զանգվածային բնույթը: Ագաթանգեղոսը հավաստում է, որ միայն մեկ օրում Գրիգոր Լուսավորիչը Արածանի գետում մկրտեց չորս հարյուր բյուր (չորս միլիոն) զորականների, աշխարհականների[21]: Հունարեն Վարքը Բագավանում մկրտվածների մեջ հիշում է նաև Վրաց, Աղվանից և լազերի թագավորներին[22]: Ագաթանգեղոսն ավելի է ընդլայնում Գրիգորի քարոզչության ոլորտները, դրանց մեջ ընդգրկելով նաև Ատրպատականը, Միջագետքը[23]:

Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, որ Հայաստանում են մկրտվել Աղվանից թագավոր Ուռնայրն ու իր զորքը, և որ Գրիգոր Լուսավորիչն անձամբ մեկնել է Վրաստան, Աղվանք և «լուսաւորէր զերկոսին զաշխարհսն և հաստատէր քրիստոսական հաւատովն գնալ»[23]: Ագաթան-

---

[19] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ., Մ.Աբեղեանի և Մ.Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 122:

[20] Ագաթանգեղոս, ՃԺԹ, էջ 435:

[21] G.Garitte, նշվ. աշխ., էջ 99:

[22] Ագաթանգեղոս, էջ 439:

[23] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ.Առաքելյանի, Ե., 1983, I, ԺԱ, էջ 18 - 19, 35 - 37:

գեղոսի արաբական խմբագրություններում ևս նույնն է հավաստվում[24]: Սակայն Ագաթանգեղոսի վրացերեն խմբագրություններում ոչ մի խոսք չկա Վրաստանում և Աղվանքում Գրիգորի քարոզչության մասին[25]:

Ամենայն հավանականությամբ, Ագաթանգեղոսի երկասիրության մեջ նշված տեղեկությունները հետագայում արված հավելումներ են, որոնց նպատակն է եղել հիմնավորել Հայոց, Վրաց և Աղվանից եկեղեցիների դավանական միությունը: Հատկանշական է, որ 6-րդ դարում արդեն Հայոց կաթողիկոսանիստ Դվինը համարվում էր հայ, վրացի, աղվան և հարևան այլ ժողովուրդների եկեղեցիների գլխավոր կենտրոնը: 6-րդ դ. ասորի պատմագիր Զաքարիա Հռետորը գրում է, որ «Հյուսիսային շրջանում կան հինգ հավատացյալ ժողովուրդ», որոնց կաթողիկոսը նստում է 'Դվինում[26] (անշուշտ, նկատի է առնում նաև աբխազներին ու ալաններին): Ղազար Փարպեցին գրում է, որ 450 - 451թթ. Հայոց ժողովրդական պատերազմի ժամանակ ուղենշող դեր ուներ երեք դրացի երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեությունը տարածելու և նրա ավանդներին հավատարիմ մնալու գաղափարը[27]: Հետևաբար, V դ. արդեն Հայոց եկեղեցական միջավայրում քաղաքացիություն է ստացել Գրիգոր Լուսավորչի կողմից հիշյալ երկրներում քրիստոնեություն տարածելու վերաբերյալ ավանդազրույցը, որն անշուշտ, պատմական հիմքից զուրկ է, քանի որ նշված երկրներում այդ կրոնը հաղթանակել է Գրիգորի մահվանից հետո, տեղացի միսիոներների քարոզչության շնորհիվ: Գրիգորը հետագայում է պաշտվել իբրև դրացի երեք ժողովուրդների լուսավորիչ և առաքյալ[28]:

Պետականորեն քրիստոնեության ընդունումն, անշուշտ, դեռևս առաջին քայլն էր նոր կրոնի արմատավորման համար: Քրիստոնեությունը կայուն հոգևոր և պետական գործոնի վերածելու համար անհրաժեշտ էր կազմակերպել եկեղեցական նվիրապետություն: Այդ գործին ևս ձեռնամուխ եղավ Գրիգոր Լուսավորիչը, որը ըստ Ագաթանգեղոսի, Հայաստանի բոլոր բնակավայրերում կարգեց քահանաներ, գավառներում եպիսկոպոսներ, որոնց զգալի մասը նախկին քրմեր և քրմորդիներ էին: Սակայն պետական կրոն դառնալը դեռևս չէր նշանակում, թե քրիստոնեությունը Հայաստանում արդեն դարձել է ազգային և իշխում է մարդկանց հոգիներին: Նոր կրոնին կենսունակություն հաղորդելու միտումով Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական որոշ ծեսեր պատվաստեց քրիստոնեությանը: Դրա շնորհիվ Հայոց եկեղեցին պահպանեց հին հավատալիքների ավանդական, առավել ժող-

---

[24] Տե՛ս Н.Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов Св. Григорием (арабская версия), С.Петербург, 1905, с. 137. Ա.Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, էջ 94:

[25] Տե՛ս Գ.Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Ե., 1982:

[26] Տե՛ս Ասորական աղբյուրներ, Ա, թարգմ., առաջաբանը և ծան. Հ. Մելքոնյանի, Ե., 1976, էջ 313 - 14:

[27] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ.Տէր-Մկրտչեանի և Ստ.Մալխասեանի, Տփղիս, 1904, II, Իե. էջ 50:

[28] Ն.Ցա.Մառի կարծիքով դժվար է հիմնավորել մինչև VII դ. Հայաստանում Գրիգոր Լուսավորչի յայն ժողովրդականություն ունենալու փաստը (Н.Марр, Крещение..., с. 154 – 155); Հմմտ. նաև П.Мурад ян, Кавказский культурный мир и культ Григория Просветителя (Кавказ и Византия, 3, 1982, с. 11).

վրդական տարրերը: Դրանք ինքնահատուկ դրոշմ թողեցին հայերի քրիստոնեական դավանանքի վրա, որն այդպիսով ձեռք բերեց ազգային հնավանդ հավատքի նվիրական հատկանիշները, որոնց շնորհիվ ժողովուրդը քրիստոնեության մեջ տեսավ հարազատ տարրեր և հոգեպես ընդունեց այն: Միայն այդ կերպ կարելի էր պետական կրոն հռչակված քրիստոնեությունը վերածել Հայոց թագավորության գաղափարական-քաղաքական հենարանի: Անշուշտ, այդ հանգամանքն հաշվի առավ Գրիգոր Լուսավորիչը՝ եպիսկոպոսներ ձեռնադրելով 12 քրմերի ու քրմորդիների[29], որոնք էական դեր կարող էին խաղալ հին կրոնի տարրերի քրիստոնեացման գործում: Հասկանալի է, բոլորովին այլ վերաբերմունք ցուցաբերվեց քրմական դասի ընդվզուն տարրերի նկատմամբ: Վերջիններիս հողատիրույթները բռնագրավվեցին հօգուտ եկեղեցու[30]: Հոգևորականները Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի կամքով դասվեցին ազատների կարգը, դարձան ապահարկ[31]:

Հայաստանի հոգևոր-գաղափարական, մշակութային ինքնության պահպանմանն էապես նպաստեց քրիստոնեական քաղաքակրթությունը, որի զարգացմանն էին ուղղված Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի ձեռնարկած կրթալուսավորչական ձեռնարկումները: Ագաթանգեղոսը վկայում է, որ Գրիգորի հորդորմամբ «տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկտոյ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի Սիրայ... վարդապետս»[32]: Այդ դպրոցների շնորհիվ հնարավոր դարձավ ընդլայնել քրիստոնեական կրոնի ազդեցության ոլորտները, երկրի անգամ խուլ ու հեռավոր հորիզոններում վառել նորաչունչ գաղափարներով համակված բանականության ճրագը: Դրա շնորհիվ պայմաններ ստեղծվեցին բնակչության լայն խավերի համար՝ հաղորդակցվելու նոր կրոնի խրթնաբան ու անդյուրամարս վարդապետությանը: Դպրոցներում ուսուցումը տարվում էր հունարեն և ասորերեն լեզուներով, քանի որ դրանք էին ժամանակի քրիստոնեաբանության լեզուները և, բացի այդ, հին մտաշխարհում ունեին գիտական, մշակութային մեծ ազդեցություն: Այդ կերպ հնարավոր դարձավ հին աշխարհի մշակութային արժեքները նորովի, քրիստոնեական ոգով ներհյուսել հայոց պետական գաղափարաբանությանը, որն այդպիսով ստացավ նոր որակ, նոր հնչերանգներ և նոր ուղղություն: Հայաստանի հելլենիստական մշակույթը քրիստոնեացվեց, հարստացնելով նոր կրոնը, որն այդպիսով դարձավ ավելի ներուժ ու ազգային:

Հայոց եկեղեցու ինքնուրույն, ազգային դիմագծի ձևավորմանն էր նպատակաուղղված նաև դավանաբանական, տեսական խնդիրների լուծումը Գրիգոր Լուսավորչի կողմից: Նրա անունով պահպանված կանոնական 30

---

[29] Ագաթանգեղոս, էջ 441 - 442: Պատմագիրը նշում է այս եպիսկոպոսներից միայն երկուսի առաջնորդությանը ենթակա շրջանները, մինչդեռ, հունարեն Վարքում տրված են նաև մնացած տասը եպիսկոպոսների իրավասության ոլորտներում եղած շրջանները (G.Garitte, նշվ. աշխ., էջ 102 - 103):

[30] Հովհան Մամիկոնյան, էջ 112:

[31] Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե.Տեր-Մինասյանի, Ե., 1957, Բ, էջ 46, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխ. Վ.Հակոբյանի, Ե., 1971, էջ 204, 209:

[32] Ագաթանգեղոս, ՃԻ, էջ 437 - 438:

գրությունները դրա ապացույցն են[33]: Այդ կանոնները բխում էին Հայաստանում քրիստոնեական կրոնի տարածման ընթացքում եկեղեցու առջև ծառացած խնդիրներից և ունեին նաև աշխարհիկ իրավանորմերի նշանակություն: Անշուշտ, դրանց ստեղծմանը կարող էր մասնակցել նաև Տրդատ Մեծը, որը մեծապես շահագրգռված էր քրիստոնեության, իբրև պետական-քաղաքական զորեղ գործոնի միջոցով իր թագավորության ներքին հարաբերությունների օրինակարգմամբ: Այդ կանոնները Գրիգորը հավանորեն վերջնական տեսքի բերեց իր կյանքի վերջալույսին, երբ Աղբիանոսին թողնելով իրեն տեղապահ, մի խումբ աշակերտներով հեռացավ Եփրատի ակունքներին մերձակա լեռները, որտեղից, ինչպես Հավաստում է պատմագիրը, «լուսաւորէր զամենեսեան»[34]: Գրիգորն իր գործունեության այս փուլում ջանացել է ազատ ու անքույթ մթնոլորտում ընդհանրացնել իր քարոզչության ընթացքում կուտակված փորձը և այդ հիման վրա կատարելագործել Հայոց եկեղեցու դավանաբանությունը: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Տրդատ թագավորը Գրիգորին հորդորեց վերադառնալ Վաղարշապատ, որպեսզի շարունակի գլխավորել Հայոց եկեղեցին, սակայն Գրիգորը հրաժարվեց և այլևս չվերադարձավ մայրաքաղաք, թեև անհրաժեշտ դեպքերում նա իջնում էր լեռնածերպերից և միջամուխ էր լինում ներեկեղեցական խնդիրներին, ամրապնդում քրիստոնեական հավատքը իր հետևորդների մեջ[35]:

Տրդատ թագավորի կողմից Գրիգոր Լուսավորչին Վաղարշապատ հրավիրելն ուներ իր դրդապատճառները: Երկրում պետականորեն ընդունված քրիստոնեությունը խորն արմատներ չէր գցել ժողովրդի ընդերքում: Տակավին կենսունակ էին հեթանոսական հավատալիքները, որոնց դեմ հնարավոր չեղավ արդյունավետ պայքար ծավալել ո՛չ կաթողիկոսական տեղապահ Աղբիանոսի, ո՛չ մյուս բարձրաստիճան հոգևորականների և ոչ իսկ Տրդատ թագավորի կողմից: Ագաթանգեղոսի վկայության համաձայն, երբ Գրիգորը մերժեց Տրդատ Մեծի հրավերը, վերջինս տրվեց ճգնակեցության, մտավոր զբաղումների և Գրիգորի ու նրա աշակերտների հետ միասին «զամենայն ժամանակս իւրեանց ընթերցուածոց գրոց ծախէին»[36]: Այս խոսքերը հիմք են տալիս կարծելու, որ Տրդատ թագավորը, զգալով հեթանոսության վերականգնման հնարավորությունը, նույնպես ստիպված է եղել Գրիգոր Լուսավորչի հետ զբաղվել դավանաբանական խնդիրներով, ըստ երևույթին նաև քարոզչությամբ, որպեսզի անձնական

---

[33] Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Հ.Ա, աշխ. Վ.Հակոբյանի, Ե., 1964, էջ 245 - 249: Հիմնավորված չէ այդ կանոնները Կեսարիայում Գրիգորին հանձնելու վերաբերյալ Ն.Ակինյանի կարծիքը. տե՛ս Ն.Ակինյան, Գրիգոր Լուսաւորիչ (Հանդես Ամսօրյա, 1949, էջ 57): Այդ կանոնները արտացոլում էին Հայաստանում ստեղծված իրավիճակը, որին բնականաբար ավելի քաջատեղյակ էին Գրիգոր Լուսավորիչը և նրան սատարող Տրդատ Մեծը, քան Հռոմեական կայսրության մեջ, Հայաստանից հեռու ապրող, նրա ներքին կյանքին անհաղորդ կեսարացի հոգևոր այրերը:

[34] Ագաթանգեղոս, էջ 448:

[35] Մովսես Խորենացի, II, ՂԱ, էջ 243: Հավանաբար, Գրիգորի կյանքի այս շրջանում, թերևս նրա խնդրանքով թարգմանվեցին անապատական գաղափարաբանության ստեղծողներից մեկի՝ IV դ. ասորի մատենագիր Ափրաատի ճառերը (տե՛ս Գիրք, որ կոչի զգօն, Կ.Պոլիս, 1824): Այդ ճառերը հայ մատենագիրները վերագրել են Հակոբ Մծբնացուն: Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջալույսին դարձավ Հայաստանում առաջին անապատականներից մեկը, ուստի պետք է հետաքրքրություն տածեր անապատական գաղափարաբանությունն արծարծող այդ երկասիրության հանդեպ:

[36] Ագաթանգեղոս, ՃԻԷ, էջ 467:

օրինակով բնակչության մեջ կարողանա ամրապնդել քրիստոնեական հավատը և կասեցնի գլուխ բարձրացրած հեթանոսության հետագա ծավալումը: Այս տեսակետից ուշագրավ է, որ Մովսես Խորենացին Տրդատ Մեծին համարում է Գրիգորի ոչ միայն գործակիցը, այլև իր ճգնակեցությամբ, սրբասուն վարքով նրա զուգակիցը[37]: Խորենացու ժամանակակից եկեղեցական մատենագիր Սոզոմենոսը գրում է. թե ինքը տեղեկացել է, որ «Հայերն ավելի առաջ են ընդունել քրիստոնեությունը: Ասում են, թե Տրդատը այս ազգի առաջնորդը, մի աստվածային հրաշքի պատճառով, որ կատարվեց նրա տան մեջ, իսկույնևեթ ինքը դարձավ քրիստոնյա և հրամայեց, որ քարոզչությամբ նույն կրոնն ընդունեն իր բոլոր հպատակները»[38]: Այս վկայությունից հետևում է, որ Տրդատը նախընտրել է նոր հավատը երկրում արմատավորել ոչ միայն բռնությամբ. այլև խաղաղ ձեռնարկումներով, քարոզչությամբ: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Հայոց թագավորը կամենում էր նաև հոգևոր-գաղափարական անջրպետներ ստեղծել Հայաստանի և նրա հարևան հեթանոսական պետությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, երկրում խթանել հոգևոր-մշակութային առաջընթաց, ժողովրդի մեջ սնուցանել քրիստոնեական քաղաքակրթությունն ու կենսաձևը և դրանով իսկ բացառել Հայաստանում օտար ազդեցության տարածման հնարավորությունը: Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ներդրած ջանքերի շնորհիվ քրիստոնեությունը հայ ժողովրդի մեջ ամրապնդեց օտար հզոր պետությունների քաղաքական և կրոնական հարաճուն սպառնալիքին դիմակայելու աննկուն ոգի, դառնալով նրա գոյատևման գաղափարաքաղաքական հզոր և հարամնա կռվանը:

ОБ ОСТОЯТЕЛЬСТВАХ ПОСВЯЩЕНИЯ ГРИГОРА ПРОСВЕТИТЕЛЯ И О ВСЕОБЩЕМ ОБРАЩЕНИИ АРМЯН В ХРИСТИАНСТВО

В.М.ВАРДАНЯН

Резюме

Посвящение в 313г. Григора Просветителя в Кесарии имело формальное, ритуальное значение. Цель – сохранение единства армянской церкви с остальным христианским миром. Царь Армении Трдат III до отъезда Григора в Кесарию назначил его главой Армянской апостольской церкви. Тот факт, что во время отъезда в Кесарию Григора сопровождали армянские именитые нахарары с ратью, говорит о готовности Армении защитить Кесарийское патриаршество.

Дабы уничтожить следы язычества в Армении, Григор Просветитель языческие храмы превратил в христианские церкви. Христианская цивилизация качественно повлияла на духовно-культурный прогресс армянского народа.

---

[37] *Մովսես Խորենացի, էջ 245 - 246:*

[38] *L. Duchesne, Early history of the Christian church, vol. III, London, 1960, p. 367.*